

## ՏԵՂԵԿԱՆՔ

«Բռնադատվածների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծում (Կ-040-06.03.2019-ՄԻ-011/0) կատարված փոփոխությունների վերաբերյալ

Նախագիծ  
Լրամշակված տարբերակ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### «ԲՐՆԱԴԱՏՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Բռնադատվածների մասին» 1994 թվականի մայիսի 25-ի ՀՕ-106 օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ հոդվածով.

**«Հոդված 14.** Բռնադատվածի կամ բռնադատվածի առաջին հերթի ժառանգի կողմից օրենքով նախատեսված իրավունքների իրականացման և արտոնություններից օգտվելու հիմք է համապատասխանաբար բռնադատվածին կամ բռնադատվածի առաջին հերթի ժառանգին տրված վկայականը:

Բռնադատվածի առաջին հերթի ժառանգին վկայական տրվում է այն դեպքում, երբ բռնադատվածը դատապարտված է եղել մահապատժի, մահացել է ազատազրկման ձևով պատիժը կրելիս կամ այդ պատիժը կրելուց հետո:

Վկայականը տրվում է բռնադատվածի կամ նրա առաջին հերթի ժառանգի վկայական տալու մասին դիմումի հիման վրա, որին կցվում են.

ա) արդարացման վերաբերյալ որոշումը կամ բռնադատման փաստը հաստատող այլ փաստաթղթեր.

բ) բռնադատվածի մահվան վկայականը, եթե այն տրվում է նրա առաջին հերթի ժառանգին.

գ) բռնադատվածի առաջին հերթի ժառանգ լինելը հաստատող փաստաթուղթ, եթե այն տրվում է նրա առաջին հերթի ժառանգին.

դ) ~~անձնագիր կամ~~ անձը հաստատող ~~այլ~~ փաստաթուղթ.

ե) լուսանկար՝ 35 x 45 մմ չափսի:

Բռնադատվածին կամ նրա առաջին հերթի ժառանգին համապատասխան վկայական տալու կամ վկայական տալը մերժելու մասին որոշումը ընդունում է արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարը՝ հաշվի առնելով բռնադատվածին կամ նրա առաջին հերթի ժառանգին վկայական տալու հարցի քննարկման խորհրդակցական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) եզրակացությունը, որի կազմում ընդգրկվում են արդարադատության, աշխատանքի և սոցիալական հարցերի, առողջապահության ոլորտներում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարությունների, **գլխավոր դատախազության Դատախազության**, Ազգային անվտանգության ծառայության, Ոստիկանության և Դատական դեպարտամենտի մեկական ներկայացուցիչ:

Հանձնաժողովի անհատական կազմը, աշխատակարգը, ինչպես նաև բռնադատվածին և նրա առաջին հերթի ժառանգին տրվող վկայականների ձևերը և վկայականների հաշվառման կարգը հաստատվում են արդարադատության ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակող և իրականացնող նախարարի կողմից:»:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը բռնադատվածներին և բռնադատվածների առաջին հերթի ժառանգներին տրված վկայականները պահպանում են իրենց ուժը: